




«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

«08» դեկտեմբերի 2014թ.

Հաստատում եմ  
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի  
պետի ժամանակավոր պաշտոնակատար  
 Լ. Թունյան

N ԳԲԽ 41/14 բողոքը քննող  
հանձնաժողովին

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Արմենֆարմ» ՍՊԸ-ի 20.11.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

**1. «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 20.11.2014թ. ներկայացրած բողոքով «Արմենֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ ԱՆ

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆԻԿ-ՇՀԱՊՁԲ-2014/05\_1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի 37-րդ չափաբաժնով սահմանվել է 6000 հաբ դիքլորոդոզոցիանուրաթթվի նատրիում, 2,5գ., դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ) ապրանքատեսակը:

Ընկերությունը բողոքում նշել է, որ ներկայացրել է համարժեք նյութ՝ «Ժավել Սոլիդ» N 320, 1կգ.՝ 320 հաբ, ազդող նյութը՝ դիքլորոդոզոցիանուրաթթվի նատրիումական աղ, որը մերժվել է պատվիրատուի կողմից հրավերի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Ընթացակարգի 37-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ինտերմեդ» ՍՊԸ-ի առաջարկած համարժեք նյութի արժեքը կազմել է 648000 ՀՀ դրամ, իսկ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի առաջարկած նյութի արժեքը՝ 432000 ՀՀ դրամ, և Ընկերության ներկայացրած նյութը համապատասխանել է հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. սեպտեմբերի 28-ի թիվ 2594-Ա հրամանի:

Հաշվի առնելով վերոգրյալը, Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից արձանագրությունն ընդունվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով խնդրել է վերանայել և չեղյալ համարել ՀՀ ԱՆ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից 13.11.2014թ. ուղարկված արձանագրությունը, քանի որ տվյալ չափաբաժնի մասով Ընկերության ներկայացրած նյութը համապատասխանում է հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված նյութին՝ նվազագույն գնային առաջարկով:

## **2. ՀՀ ԱՆ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները**

Պատվիրատուն 27.11.2014թ. N 102 գրությամբ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Նորք» ինֆեկցիոն

կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆԻԿՀ-ՇՀԱՊՁԲ-2014/05\_1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովն Ընթացակարգի 37-րդ չափաբաժնով «Արմենֆարմ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող հետևյալ պատճառաբանությամբ.

1. Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է 2,5գ. դիքլորոհիզոցիանուրաթթվի նատրիումի 6000 հաբ, ընդհանուր կշիռը՝ 15 կգ., սակայն «Արմենֆարմ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտով առաջարկել է 2,344գ. դիքլորոհիզոցիանուրաթթվի նատրիում, 6000 հաբ, ընդհանուր կշիռը՝ 14.064 կգ.:

Ըստ պատվիրատուի՝ 15կգ. և 14,064կգ. կշիռների տարբերության պայմաններում, Արմենֆարմ» ՍՊԸ-ի առաջարկած քանակը համարժեք չէ հրավերով սահմանված քանակին:

2. Հրավերի տեխնիկական բնութագրում ներառված 2,5 գրամ ազդող նյութ պարունակող հաբերի փոխարեն առաջարկվել է 2,344 գրամ ազդող նյութ պարունակող հաբեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի փաթեթավորմանը, չափին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը, տվյալ դեպքում՝ 2,5գ. ազդող նյութ պարունակող հաբեր (անջատվում է 1,7գ. ակտիվ քլոր), իսկ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն առաջարկել է 2,344գ. ազդող նյութ պարունակող հաբեր (անջատվում է 1,5գ. ակտիվ քլոր), ինչն Օրենքի 12-րդ հոդվածի վերոնշյալ մասի համաձայն՝ հանդիսանում է անհամապատասխանություն:

3. Պատվիրատուն 27.11.2014թ. N 102 գրությամբ ներկայացրել է 2,5գ. և 2,344գ. դիքլորոհիզոցիանուրաթթվի նատրիումի աղ պարունակող հաբերի համեմատական վերլուծությունը՝ աղյուսակների ձևով.

Բակտերիալ (բացի տուբերկուլյոզից) և վիրուսային (ներառյալ հեպատիտները, ՄԻԱՎ վարակը)						
Ախտահանող նյութ	Ախտահանման առարկա	Օգտագործելի լուծույթ պահպանման ժամկետը՝ 5 օր			Մեկ պատրաստման ծախս	
		խտություն	ջուր (լիտր)	հաբ	դրամ	
2,5գ ազդող նյութով հաբեր, 1 հաբը 108 դրամ	Բժշկական պարագաներ, լաբորատոր սպասք, հիվանդի խնամքի պարագաներ, մաքրման պարագաներ, շինությունների մակերեսներ, կոպիտ կահույք	0,056%	10լ	4		
	Արտազատուկներով չկեղտոտված սպիտակեղեն, սպասք առանց սննդի մնացորդների	0,014%	10լ	1		
	Արտազատուկներով կեղտոտված սպիտակեղեն, սպասք սննդի մնացորդներով	0,084%	10լ	6		
Ընդամենը			30լ	11	1188	

Ախտահանող նյութ	Ախտահանման առարկա	Օգտագործելի լուծույթ պահպանման ժամկետը՝ 3 օր			Մեկ պատրաստման ծախս	
		կոնցենտրացիա	ջուր (լիտր)	հաբ	դրամ	
2,344գ ազդող նյութով հաբեր, 1 հաբը 72 դրամ	Բժշկական պարագաներ, լաբորատոր սպասք, հիվանդի խնամքի պարագաներ, մաքրման պարագաներ, սպասք սննդի մնացորդներով	0,1%	10լ	7		
	Շինությունների մակերեսներ, կոպիտ կահույք, արտազատուկներով չկեղտոտված սպիտակեղեն, սպասք առանց մնացորդների	0,015%	10լ	1		
	Արտազատուկներով կեղտոտված սպիտակեղեն,	0,2%	10լ	14		
Ընդամենը			30լ	22	1584	

4. Պատվիրատուն հայտնել է, որ ինֆեկցիոն հիվանդանոցի առանձնահատկություններով պայմանավորված, սեզոնային վարակների, հակահամաճարակային միջոցառումների իրականացման, ինչպես նաև այլ անկանխատեսելի իրավիճակներում «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցն աշխատում է մեծ ծանրաբեռնվածությամբ, անհրաժեշտություն է առաջանում ախտահանման աշխատանքները կազմակերպել ավելի կարճ ժամանակահատվածներում, ինչը հնարավոր է կատարել 2,5գ. ազդող նյութով պատրաստվող աշխատանքային լուծույթների կիրառման պայմաններում, այլ ոչ թե 2,344գ. ազդող նյութով պատրաստվող աշխատանքային լուծույթների կիրառմամբ: Նվազ ծանրաբեռնվածության պայմաններում 2,5գ. ազդող նյութով հաբերի կիրառմամբ ախտահանման աշխատանքները կարող են կատարվել աղյուսակում նշված քանակներից քիչ քանակի նյութ ծախսելով, ի հաշիվ ախտահանման ավելի երկար ժամկետի: Նման հնարավորությունը բացակայում է 2,344գ. ազդող նյութով հաբերի միջոցով ախտահանման պայմաններում:

Ըստ Պատվիրատուի՝ 1-4-րդ կետերում նշված հանգամանքներն ապացուցում են, որ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի կողմից կազմակերպված «ՆԻԿՀ-ՇՀԱՊՁԲ-2014/05\_1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 37-րդ չափաբաժնի գնահատման հարցում խախտում թույլ չի տրվել:

### **3. ԳԲԽ-41/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Արմենֆարմ» ՍՊԸ-ի 20.11.2014թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Պատվիրատուի 27.11.2014թ. N 102 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-41/14 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է

«ՆԻԿ-ՇՀԱՊՁԲ-2014/05\_1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի 37-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Արմենֆարմ», «Ինտերմեդ» և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ները:

2. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, 37-րդ չափաբաժնով գնման ենթակա ապրանքի համար սահմանվել է դիքլորոդիզոցիանուրաթթվի նատրիում, 2,5գ., դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ), չափման միավորը՝ դեղահատ, պահպանման պայմանները՝ պահել դեղամիջոցներից առանձնացված տեղում, 5-40 աստ.С ջերմաստիճանում:

3. Ընթացակարգի հրավերի N 2 հավելվածով՝ գնման ժանակացույցով, 2014թ. 4-րդ եռամսյակում նախատեսվել է գնել 37-րդ չափաբաժնով սահմանված դիքլորոդիզոցիանուրաթթվի նատրիում, 2,5գ. դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ) ապրանքը՝ 6000 դեղահատ քանակությամբ:

4. «Արմենֆարմ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 37-րդ չափաբաժնի համար որպես համարժեք ապրանք առաջարկել է «Ժավել Սոլիդ» N 320, 1 կգ՝ 320 հաբ, 1 հաբը՝ 3,2գ., դիքլորոդիզոցիանաթթվի Na-ական աղ (73,25%), 1,5գ. ակտիվ քլորի պարունակությամբ, որի մակերեսների փխտահանման ռեժիմներն են՝

- 1 հաբը 10 լիտրում 0,015% աշխատանքային լուծույթ (հակաբակտերիալ, հակավիրուսային ազդեցություն)

- 4 հաբը 10 լիտրում 0,06% աշխատանքային լուծույթ, (հակավիրուսային, հակասնկային, հակաբակտերիալ, հակատուբերկուլյոզային ազդեցություն):

Բացված պատրաստի լուծույթը պիտանի է 3 օր: 1կգ. «Ժավել Սոլիդից» պատրաստված աշխատանքային լուծույթը նախատեսված է 32000քմ. տարածքի փխտահանման համար: Հաբերի պիտանելիության ժամկետը 3 տարի է:

Պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն, ունի ISO և ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրեր:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2014թ. կայացրած թիվ 3 որոշման համաձայն՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը ճանաչվել է Ընթացակարգի 37-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանող:

6. Պատվիրատուն 27.11.2014թ. N 102 գրությամբ հայտնել է, որ դիքլորոհզոցիանուրաթթվի նատրիում անվանմամբ դեղը (ախտահանիչը) նախատեսվել է օգտագործել բժշկական պարագաներ, լաբորատոր սպասք, հիվանդի խնամքի պարագաներ, մաքրման պարագաներ, շինությունների մակերեսներ, կոպիտ կահույք, արտազատուկներով չկեղտոտված սպիտակեղեն, առանց սննդի մնացորդների սպասք, արտազատուկներով կեղտոտված սպիտակեղեն, սննդի մնացորդներով սպասք ախտահանելու համար:

**4. ԳԲԽ-41/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատես-

ված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «ա» կետի համաձայն՝ դեղեր են համարվում նաև հականեխիչ միջոցները (անտիսեպտիկներ)՝ վարակիչ և մակաբուժային հիվանդությունների հարուցիչները, ինչպես նաև դրանց փոխանցողներին ոչնչացնող կամ վերացնող միջոցները և վարակազերծիչ միջոցները՝ հակամանրէային ակտիվությամբ օժտված նյութերը, որոնք օգտագործվում են բժշկական նշանակության առարկաների վարակազերծման համար:

ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղին ներկայացվող պահանջները, մասնավորապես, դեղաչափը նշելիս՝ բազմաբաղադրատարր դեղերի դեպքում նշվում է յուրաքանչյուր բաղադրատարր դեղի դեղաչափը (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)):

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 37-րդ չափաբաժնով, պահանջվել է դիքլորոհիդրոքլանուրաթթվի նատրիում, 2,5գ., դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ) դեղորայքը: Նշված ախտահանող նյութը ՀՀ առողջապահության նախարարի 04.04.2014թ. N 10-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանի (ռեեստրի) աղյուսակի 2983 համարի տակ գրանցված է «Պրեսեպտ» անվանմամբ, որի միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրի անվանումն է՝ դիքլորոհիդրոքլանուրաթթվի նատրիում, դեղաձևն է՝ դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ), դեղաչափը և թողարկման ձևն է (փաթեթավորումը) 2,5գ. պլաստիկ տարան (100):

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն որպես Ընթացակարգի 37-րդ չափաբաժնով պահանջված ապրանքին համարժեք ապրանք առաջարկել է «Ժավելի Սոլիդ» N 320, 1 կգ՝ 320 հաբ, 1



հաբը՝ 3,2գ., դիքլորոհիզոգիանուրաթթվի նատրիումական աղ (73,25%), 1,5գ. ակտիվ քլորի պարունակությամբ:

Պատվիրատուի կողմից վկայակոչված և Ընկերության տրամադրած ՀՀ գլխավոր պետական սանիտարական բժիշկ Վ.Դավիդյանի «Համաճարակաբանական միջոցառումների ուժեղացման նպատակով մեթոդական ցուցումների հաստատման մասին» 29.04.2003թ. թիվ 286 հրամանով հաստատվել է նաև «Պրեսեպտ» (հաբեր և գրանուլաներ) ախտահանող նյութի օգտագործման և որակի վերահսկման վերաբերյալ մեթոդական ցուցումը, որի համաձայն՝ «Պրեսեպտ» միջոցը, որպես ազդող նյութ, իր մեջ պարունակում է դիքլորոհիզոգիանուրաթթվի նատրիումական աղ 50% քանակությամբ և որպես հաբ արտադրվում է 5գ. և 1գ. քաշով, ինչից հետևում է, որ 5գ. քաշ ունեցող 1 հաբը պարունակում է 2,5գ. դիքլորոհիզոգիանուրաթթվի նատրիումական աղ (5գ. հաբ X 50% դիքլորոհիզոգիանուրաթթվի նատրիումական աղ):

2,5գ. դիքլորոհիզոգիանուրաթթվի նատրիումական աղ պարունակող հաբից լուծման ժամանակ անջատվում է 1,44-1,76գ. ակտիվ քլոր:

Բժշկական պարագաների, լաբորատոր սպասքի, հիվանդի խնամքի պարագաների, մաքրման պարագաների, շինությունների մակերեսների և կոպիտ կահույքի ախտահանման համար պահանջվում է ակտիվ քլորի 0,056% լուծույթ: Նման կոնցենտրացիայի 10լ. լուծույթ պատրաստելու համար պահանջվում է «Պրեսեպտ» միջոցի 4 հաբ:

Արտազատուկներով չկեղտոտված սպիտակեղենի, առանց սննդի մնացորդների սպասքի ախտահանման համար պահանջվում է ակտիվ քլորի 0,014% լուծույթ: Նման կոնցենտրացիայի 10լ. լուծույթ պատրաստելու համար պահանջվում է «Պրեսեպտ» միջոցի 1 հաբ:

Արտազատուկներով կեղտոտված սպիտակեղենի, սննդի մնացորդներով սպասքի համար պահանջվում է ակտիվ քլորի 0,084% լուծույթ: Նման կոնցենտրացիայի 10լ. լուծույթ պատրաստելու համար պահանջվում է «Պրեսեպտ» միջոցի 6 հաբ:

«Պրեսեպտ» միջոցի լուծույթի պահպանման ժամկետը 5 օր է:

Պատվիրատուի կողմից վկայակոչված և Ընկերության տրամադրած ՀՀ առողջապահության նախարարի 28.09.2013թ. թիվ 2594 հրամանով հաստատվել է «Ժավել Սոլիդ» ախտահանիչ նյութի օգտագործման և որակի վերահսկման հրահանգը:

Վերոնշյալ հրահանգի համաձայն՝ «Ժավել Սոլիդ» ախտահանիչ նյութն արտադրվում է 3,2գ. կշռով հաբերի տեսքով, իր մեջ պարունակում է դիքլորոդիզոցիանուրաթթվի նատրիումական աղ: Ջրում մեկ հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5 գ. ակտիվ քլոր:

Ըստ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի՝ «Ժավել Սոլիդ» ախտահանիչ նյութի 3,2գ. կշռով հաբը պարունակում է 73,25 %, այսինքն՝ 2,344գ. դիքլորոդիզոցիանուրաթթվի նատրիումական աղ (3,2գ. հաբ X 73,25% դիքլորոդիզոցիանուրաթթվի նատրիումական աղ):

Բժշկական պարագաների, լաբորատոր սպասքի, հիվանդի խնամքի պարագաների, մաքրման պարագաների, շինությունների մակերեսների և կոպիտ կահույքի ախտահանման համար պահանջվում է ակտիվ քլորի 0,1% լուծույթ: Նման կոնցենտրացիայի 10լ. լուծույթ պատրաստելու համար պահանջվում է «Ժավել Սոլիդ» միջոցի 7 հաբ:

Արտազատուկներով չկեղտոտված սպիտակեղենի, առանց սննդի մնացորդների սպասքի ախտահանման համար պահանջվում է ակտիվ քլորի 0,15% լուծույթ: Նման կոնցենտրացիայի 10լ. լուծույթ պատրաստելու համար պահանջվում է «Ժավել Սոլիդ» միջոցի 1 հաբ:

Արտազատուկներով կեղտոտված սպիտակեղենի, սննդի մնացորդներով սպասքի ախտահանման համար պահանջվում է ակտիվ քլորի 0,2% լուծույթ: Նման կոնցենտրացիայի 10լ. լուծույթ պատրաստելու համար պահանջվում է «Ժավել Սոլիդ» միջոցի 14 հաբ:

«Ժավել Սոլիդ» միջոցի լուծույթի պահպանման ժամկետը 3 օր է:

Վերոնշյալ ակտերի, ինչպես նաև Պատվիրատուի և Ընկերության ներկայացրած համեմատական աղյուսակների վերլուծությունից հետևում է, որ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն առաջարկել է հրավերով պահանջվող գնման առարկային ոչ համարժեք ապրանք, մասնավորապես.

- Հրավերով պահանջվել է, որպեսզի մեկ հաբը պարունակի 2,5գ. դիքլորոդիզոցիանուրաթթվի նատրիումական աղ, մինչդեռ՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է 73,25 %, այսինքն՝ 2,344գ. դիքլորոդիզոցիանուրաթթվի նատրիումական աղ պարունակող հաբ:

- Հրավերով պահանջվող 2,5գ. դիքլորոհիզոնուրաթթվի նատրիումական աղ պարունակող հաբից լուծման ժամանակ անջատվում է 1,44-1,76գ. ակտիվ քլոր, մինչդեռ՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկված «Ժավել Սոլիդ» ախտահանիչ նյութի մեկ հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5գ. ակտիվ քլոր:

- Հրավերով պահանջվել է 2,5գ. դիքլորոհիզոնուրաթթվի նատրիումական աղ պարունակող 6000 հաբ, որի պայմաններում դիքլորոհիզոնուրաթթվի նատրիումական աղի ընդհանուր կշիռը կազմում է 15 կգ., մինչդեռ՝ 73,25 %, այսինքն՝ 2,344գ. դիքլորոհիզոնուրաթթվի նատրիումական աղ պարունակող 6000 հաբի դեպքում դիքլորոհիզոնուրաթթվի նատրիումի ընդհանուր կշիռը կազմում է 14,064 կգ.:

- Հրավերով պահանջված 2,5գ. դիքլորոհիզոնուրաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանման միջոցը արտադրվում է 5գ. հաբի տեսքով, մինչդեռ՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է 3,2գ. քաշ ունեցող հաբ:

- «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված «Ժավել Սոլիդ» միջոցի լուծույթի պահպանման ժամկետը 3 օր է, իսկ Հրավերով պահանջված դեղահատի լուծույթի պահպանման ժամկետը 5 օր:

- Հրավերով պահանջվող և «Արմենֆարմ» ՍՊԸ-ի առաջարկված նյութերով միևնույն առարկաների ախտահանման համար 10լ աշխատանքային լուծույթ ստանալու համար պահանջվում են տարբեր քանակի հաբեր (համապատասխան կոնցենտրացիայի 10լ լուծույթ պատրաստելու համար «Ժավել Սոլիդ» միջոցի դեպքում օգտագործվում է ավելի շատ քանակությամբ հաբ):

- Հրավերով պահանջվող նյութով և «Արմենֆարմ» ՍՊԸ-ի առաջարկված նյութով միևնույն առարկաների ախտահանման համար պահանջվում են ախտահանման տարբեր ժամանակահատվածներ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, քանի որ Ընկերության ներկայացրած ապրանքատեսակը չի համապատասխանել Հրավերով նախատեսված ապրանքատեսակի տեխնիկական բնութագրին, իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:


Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2014թ. կայացրած թիվ 3 որոշումը՝ Ընթացակարգի 37-րդ չափաբաժնով «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը Հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու հիմքով մերժելու վերաբերյալ, համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի առաջարկում ենք «Արմենֆարմ» ՍՊԸ-ի 20.11.2014թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի  
Պետի տեղակալ՝




Հ. Այոնց

Գնումների աջակցման և իրավական  
խորհրդատվության վարչության պետ՝




Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման  
բաժնի վարիչ՝



Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և  
ահազանգման բաժնի առաջատար  
մասնագետ՝ ԳԲԽ-41/14 բողոքը  
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Գրիգորյան